

<< Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի (հասարակական միջոցառումների ծրագրերը) պահանջի վերաբերյալ

Տեղեկացվում է

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի գլխավորությամբ մարզպետարանն իրականացնում է գործունեություն՝ երիտասարդական քաղաքականության վերաբերյալ, ինչպես նաև միջոցառումներ կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացման ուղղությամբ: ՀՀ Գեղարքունիքի մարզպետին կից գործում է երիտասարդական խորհուրդ, որը մարզի երիտասարդության շրջանում իրականացնում է տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ երիտասարդական հավաք ճամբարներ, մրցույթներ, փառատոններ, կրթամշակութային և բնապահպանական բազմաբովանդակ միջոցառումներ: Մարզում գործող կրթամշակութային կազմակերպությունների կողմից իրականացվում են ցուցահանդեսներ, արվեստի տարբեր ոլորտներին վերաբերող՝ երգչախմբային արվեստի, երգի, պարի, ասմունքի մրցույթ-փառատոններ: Նշվում են պետական տոները և ծիսական արարողությունները: Մարզական ոլորտում ավանդաբար կազմակերպվում են տարբեր խորագրով մրցույթներ՝ ՀՀ Նախագահի մրցանակի համար: Հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ կազմակերպվում են քննարկումներ և հանրային լսումներ: Մարզում իրականացվող հասարակական միջոցառումների շրջանակում կազմակերպվում են նաև բարեգործական միջոցառումներ: